ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆԻՍՈՒՍԻ ԿՅԱՆՔԸ ԵՒ ՈՒՍՄՈՒՆՔԸ Ի ԴԵՄՍ ՆԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

(Ակնարկ)

Նիսուս Քրիստոս, «որը Աստծու կերպարանքով էր, մարդու կերպարանքով խոնարհեցրեց ինքն իրեն՝ հնազանդ լինելով մինչեւ մահ եւ այն էլ մահվան՝ խաչի վրա: Դրա համար էլ Աստված նրան առավել բարձրացրեց եւ նրան շնորհեց մի անուն, որ վեր է, քան ամեն անուն, որպեսզի Նիսուս Քրիստոսի անունով խոնարհվի ամեն ծունկ , եւ ամեն լեզու խոստովանի, թե Նիսուս Քրիստոս Տեր է՝ ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ. Բ. 5-11):

Հոգեգալստյան դեպքից հետո, երբ Քրիստոսի հետեւորդները սկսեցին տարածել նոր ուսմունքը, հարց առաջացավ, թե ինչքանով պետք էր պահել եւ ի գործ դնել հրեական ծեսն ու ավանդությունը, մանավանդ՝ հեթանոսությունից դարձի եկողների համար: Օրինակ՝ երբ Պետրոս Առաքյալը Կեսարիայում (Պաղեստին) քարոզեց հեթանոս Կոռնելիոսի տանը, Աստծո Հոգին իջավ նրանց վրա եւ, որպես հետեւանք, նրանք մկրտվեցին «**հանուն Նիսուսի Քրիստոսի**» (Գործք Ժ. 45-47): Երուսաղեմում Պետրոս Առաքյալը մեղադրվեց այն բանի համար, որ «**Չթլփատված մարդկանց մոտ մտավ եւ նրանց հետ կերավ**» (Գործք ԺԱ. 2-3): Երուսաղեմից Անտիոք եկած որոշ մարդիկ ասում էին. «**Մովսեսի օրենքի համաձայն եթե չթլփատվէք, չեք կարող փրկվել**» (Գործք ԺԵ. 1, տե՛ս Գաղ. Բ. 11-14; 6:12): Երուսաղեմի ժողովում (շուրջ Ք. հ. 50 թ.) նույնպես առաջարկվում է հեթանոսությունից դարձի եկած քրիստոնյաներին «**թլփատել եւ պատվիրել, որ պահեն Մովսեսի օրենքը**» (Գործք ԺԵ. 5): Սակայն ժողովը մերժեց այս տեսակետը՝ «**Որովհետեւ հաճելի թվաց Սուրբ Հոգուն եւ մեզ՝ ավելի ոչ մի բեռ չդնել ձեր վրա, բացի այս կարեւորներից. այն է՝ հեռու մնալ կուռքերին զոհված կերակուրներից եւ արյունից, խեղդամահ արված կենդանիներից ու պոռնկությունից**» (Գործք ԺԵ. 28-29):

Ոմանք նկատելով Հին եւ Նոր Կտակարանների տարբերությունները՝ եկան այն համոզման, թե մեկը մյուսի հետ կապ չի կարող ունենալ: Օրինակ՝ Մարկիոնը Պոնտոսից շուրջ 180 թվականին ո՛չ միայն մերժեց Հին Կտակարանը իր չար ու ոխակալ Աստծով, այլեւ բոլոր Հին կտակարանյան հղումները Նոր Կտակարանից վերացրեց: Շատ աղանդավորներ, ինչպես այլ վայրերում, նույնպես եւ Հայաստանում, այս կամ այլ չափով հետեւեցին սույն ուղղությանը: Այսօր էլ կան մարդիկ, որ հարցադրում են անում, թե «**մենք ինչո՞ւ պետք է կարդանք, ընդունենք եւ հավատանք հրեաների կրոնական կամ**

ազգային պատմությանը»: Կան այլ աղանդավորներ եւս, որոնք այնքան են շեշտադրում Հին Կտակարանը, կարծես թե Հիսուս իզուր էր եկել:

Հիսուս որպես մարդ ապրեց որոշ ժամանակաշրջանում եւ հստակ աշխարհագրական վայրում: Նրա գործունեության ծիրը Պաղեստինն էր, հիմնականում Գալիլեան, բայց նաեւ Երուսաղեմը, Սամարիան (Ղուկ. ԺԷ. 11, Հովհ. Դ. 5) ու Դեկապոլիսը (Մրկ. Է. 31), մինչեւ Սիդոնի եւ Տյուրոսի շրջանները (Մրկ. 7:24; Մտթ.15:21) եւ Փիլիպյան Կեսարիան (Մրկ. 8:27; Մտթ. 16:13):

Հիսուս պատմական մի անձնավորություն է, ապրած որոշ ժամանակաշրջանում, եւ ոչ թե առասպելական՝ ինչպիսիք էին հունական դիցաբանության ասպվածները: Ավետարաններում հիշվում են պատմական նշանավոր անձինք, որոնք եւ ուրվագծում են Հիսուսի ապրած ժամանակաշրջանը: Հիսուսի ծննդյան հետ կապված հիշվում են՝ Հրեաստանում, հրեաների թագավոր Հերովդես Մեծը՝ (37 Ք. ա. - 4 Ք. ա.) (տե՛ս Մտթ. Բ 1, Ղուկ. Ա. 5), Հուդայի կառավարիչ Արքեղայոսը (4 Ք. ա - 6 Ք. հ.) (տե՛ս Մտթ. Բ. 22): Օտար ղեկավարներից Ասորիքի կուսակալ Կյուրենոսը (6 - 9 Ք. հ.), Հռոմի կայսր Օգոստոսը (27 Ք.ա. - 14 Ք. հ.) (տե՛ս Ղուկ. Բ. 1):

Իսկ Հիսուսի քարոզչության ընթացքում, մինչեւ Իր մահը նշվում է Տիբերիոս Հռոմի կայսրը (14 -37 Ք. հ.): Հերովդես մեծի մահից հետո (4 Ք. ա.) նրա թագավորությունը բաժանվեց նրա երեք որդիների միջեւ: Արքեղայոսը՝ նրա ավագ որդին, իշխեց Հուդայում եւ Սամարիայում, մինչեւ աքսորվելը (6 Ք. հ.), այնուհետեւ այս տարածքը կառավարվեց Հռոմի նշանակած կուսակալներով, ինչպիսին էր Պիղատոս Պոնտացին: Մյուս որդին՝ Հերովդես չորրորդապետը (4 Ք. ա. - 39 Ք. հ.) կառավարիչն էր Գալիլիայի եւ Բերիայի: Նրա կես եղբայրը՝ Փիլիպպոսը կառավարիչն էր Իտուրացիների եւ Տրաքոնացիների շրջաններում (Հորդանան գետից հյուսիս-արեւելք), իսկ Լյուսինիասը՝ Աբիլենեյի շրջանի (Գալիլիո լճից հյուսիս-արեւելք) (տե՛ս Ղուկ. Գ. 1-2): Հրեա-Հռոմեացի ժամանակակից պատմիչ Հովսեփիոս Փլավիոսը բավական մանրամասն ներկայացնում է կենտրոնական դեմքերին՝ Պիղատոս Պոնտացուն, Հերովդես Անտիպասին եւ Փիլիպպոսին: Փիլոն Աղեքսանդրացին նույնպես վկայում է Պիղատոսի մասին:

Մարկոս Ավետարանիչը հիշում է Հերովդես Անտիպասին միայն Հովհաննես Մկրտչի սպանության դեպքի կապակցությամբ (Մրկ. Զ. 14-29, հմմտ.՝ Մտթ. ԺԴ. 1-12; Ղուկ. Թ. 7-9), իսկ Պիղատոսին՝ Հիսուսի դատապարտության եւ մահվան առնչությամբ (Մրկ. ԺԵ. 1-15, 43-45): Մատթեոսի Ավետարանում Հերովդես երբ լսում է Հիսուսի գործունեության մասին, ենթադրում է, թե Հիսուսն իր սպանած Հովհաննես Մկրտիչն է, որը հարություն է առել (Մտթ. ԺԴ. 2), իսկ ըստ Ղուկաս Ավետարանչի, Հերովդեսն ասում է. «**Սա ո՞վ է**» եւ ուզում է նրան տեսնել (Ղուկ. Թ. 7-9): Սակայն ավելի ուշ, ըստ Ղուկաս Ավետարանչի, Հերովդեսը ցանկանում է սպանել Հիսուսին (Ղուկ. ԺԴ. 31): Մատթեոս (Գլ. ԻԷ.) եւ Հովհաննես (Գլ. ԺԸ-ԺԹ.) Ավետարանիչները հետեւում են Մարկոսին՝ Պիղատոսին վերագրելով Հիսուսի մահվան դեպքը, մինչ Ղուկաս Ավետարանիչը (ԻԳ. 8-12) Հիսուսին ապրյան է բերում նաեւ Հերովդեսի առաջ, թեեւ հիմնական որոշումը եւ մավան վճիռը մնում է Պիղատոսին:

Տվյալ ժամանակի քահանայապետ է հիշվում Աննան: Վերջինս Կայիափայի կնոջ հայրն է (քահանայապետ՝ 6-15 թթ.): Ղուկաս Ավետարանիչը հիշում է նրան Հովհաննես

Մկրտչի քարոզչության սկզբնավորությանը, իսկ ըստ Հովհաննես Ավետարանչի, Հիսուս երբ ձերբակալվում է, նախ տարվում է Աննայի մոտ, որն ապա նրան ուղղարկում է Կայիափայի մոտ (Յովհ. ԺԸ. 13):

Կայիափան քահանայապետ է հիշվում մինչեւ 36 թ.: Ըստ Հովհաննես Ավետարանչի Կայիափան այդ տարվա քահանայապետն էր եւ թելադրում է վերացնել Հիսուսին, քան թողնել որ ողջ ժողովուրդը հետեւի նրան (Յովհ. ԺԱ. 49): Թեեւ քիչ անց Հովհաննեսը (ԺԲ. 10) առանց անուն հիշելու գրում է. «**Քահանայապետները խորհուրդ արեցին, որ Ղազարոսին էլ սպանեն,**»: Ղուկաս Ավետարանիչը Հիսուսի դատավարության ժամանակ չի հիշում քահանայապետի անունը, սակայն նշում է եւ՛ եզակի (քահանայապետ) (Ղուկ. ԻԲ. 54), եւ՛ հոգնակի (քահանայապետներ) կերպով (Ղուկ. ԻԳ. 13): Մարկոս եւ Մատթեոս ավետարանիչների մոտ Հիսուս միայն մեկ քահանայապետի՝ Կայիափայի մոտ է տարվում (Մրկ. ԺԴ. 53, Մտթ. ԻԶ. 57):

Հիսուսի ծնողները բարեպաշտ հրեաներ էին: Հովսեփը Մարիամին կին վերցրեց՝ քաջ գիտակցելով, թե իրեն, ըստ հրեական կրոնի, ինչ է սպասում (Մտթ. Ա. 18): Նրանք ըստ հրեական կրոնի մեծացրեցին Հիսուսին՝ ութերորդ օրը թլփատելով եւ, սրբագործման օրերը լրանալուց հետո, տաճարին ընծայելով. «**Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար**» (Ղուկ. Բ. 21-24): Ամեն Զատկի տոնի մանուկ Հիսուսին Երուսաղեմ տարան (Ղուկ. Բ. 41-52): Նույնիսկ Հիսուսին խաչից իջեցնելը (Մրկ. ԺԵ. 46), թաղումը (Յովհ. ԺԹ. 42) եւ, Տիրոջ մարմինը օծելու համար, կանանց գերեզման այցը (Մրկ. ԺԶ. 1, Ղուկ. ԻԳ. 56) եղել են համաձայն հրեական կրոնական ավանդության:

Հիսուս, հավանաբար, խոսել էր արամերեն, ինչպես այդ ժամանակվա հրեաները: Վաղ քրիստոնյաների մոտ պահպանվել են մի քանի նախադասություններ: Դրանցից են՝ «**Տալիթա՛, կումի՛**» (Մարկ. Ե. 41), «**Եփփաթա**» (Մարկ. 7:34), «**Էլի, Էլի լամա սաբաքթանի**» (Մարկ. ԺԵ. 34), «**Մարանաթա**» (Տերը շուտով կգա), որն օգտագործել է Պողոս Առաքյալը (Ա Կորնթ. ԺԶ. 22): Հիսուս նաեւ գիտեր նաեւ գրել երբայեցերեն:

Ճիշտ է, Հիսուս իր մասին որեւէ բան չգրեց, սակայն նրա աշակերտներն ու գործակիցները, որ ականատես եւ ականջալուր էին եղել դեպքերին, նախ բերանացի եւ ապա գրավոր վկայություն թողեցին մեզ: Առաջին գրավոր ակնարկությունները Հիսուսի մասին գտնում ենք Պողոս Առաքյալի նամակներում գրված շուրջ (45-60 թթ.), նախքան առաջին Ավետարանի՝ Մարկոսի գրությունը: Օրինակ՝ Պողոս Առաքյալը Հռոմեացիներին ուղղված առաջին թղթում գրում է. «**Սուրբ գրվածքներում արձանագրված է, որ Աստված նախապես իր մարգարեների միջոցով խոստացել էր այս ավետիսը, որ վերաբերում է իր Որդուն՝ մեր Տեր՝ Հիսուս Քրիստոսին, որը մարմնով սերում էր Դավթի սերնդից, բայց սահմանված էր Աստծու Որդի, երբ իր Սուրբ Հոգու զորությամբ հարություն առավ մեռելներից**»: Առաքյալը ծանրանում է Տիրոջ փառապանքի, խաչի, մահվան՝ ի գին մարդկային մեղքի, բայց նաեւ հարության վրա՝ ցույց տալու համար Քրիստոսի Աստվածային ուժը եւ խոսելու Նրա մոտալուտ գալստյան մասին (Ա Կորնթ. ԺԵ. 51-53; Բ Թսղ. Ե. 12-17): Կան հատվածներ, որոնք կապվում են ավետարանների հետ, ինչպես վերջին ընթրիքը՝ նկարագրված կորնթացիներին ուղղված առաջին նամակում (Ա Կորնթ. Ժ. 16-7;

ԺԱ. 17, տե՛ս Մտթ. ԻԶ. 26-9; Մրկ. ԺԴ. 22-5; Ղուկ. ԻԲ. 14-20): Նաեւ կան հատվածներ, որտեղ Առաքյալը խոսում է ամուսնության եւ բաժանման մասին (Հռոմ. Է. 2-3; Ա Կորնթ. Զ.16-7, տե՛ս Մտթ. ԺԹ. 3-12, Մրկ. Ժ. 2-9; Ղուկ. ԺԶ.18):

Այստեղ շատ քիչ տվյալներ կան Հիսուսի երկրային կյանքի մասին: Միայն ընդհանուր ակնարկներ, որոնք մի կողմից հուշում են, որ Պողոսն ավելին գիտի, քան ինչ ասում է, բայց դա նրան չի հետաքրքրում՝ «**Թեպետեւ ըստ մարմնի ճանաչում էինք Քրիստոսին, բայց այժմ այլեւս նույն ձեւով չենք ճանաչում**» (Բ Կորնթ. 5:16), իսկ մյուս կողմից էլ հարց են առաջացնում, թե այս ընդհանուր վկայությունները պատմական իրողություններ՞ն են, թե՞ պարզապես հղումներ Հին Կտակարանից, որպես լրումն մարգարեությունների՝ «**Երբ ժամանակը իր լրումին հասավ, Աստված ուղարկեց իր որդուն, որը ծնվեց կնոջից եւ մտավ օրենքի տակ**» (Գաղ. 4:4; տե՛ս Եսայի 7:14):

Այս շրջանում, նախքան Տաճարի կործանումը (70 թ.), քրիստոնյաները տակավին իրենք իրենց նկատում էին հրեական կրոնի լավագույն դրույթների շարունակողները: Առաքյալները Հին Կտակարանի վրա հիմնվելով ապացուցում էին այս: Օրինակ՝ Աբրահամին ուղղված խոսքը թե՝ «**բազմաթիվ ազգերի հայր արեցի քեզ**» (Հռոմ. Դ.17 հմմտ.՝ Ծննդոց ԺԷ. 5), «**երան որ իմ ժողովուրդը չէր, ինձ ժողովուրդ պիտի կոչեմ,երանք կենդանի Աստծու որդիներ պիտի կոչուեն**» (Հռոմ. Թ. 25 հմմտ.՝ Օսե Բ. 25); կամ՝ «**ամեն ծունկ ինձ ծնրադրի եւ ամեն լեզու Աստծուն դավանի**» (Հռոմ. ԺԳ. 13 հմմտ.՝ Եսայի ԽԵ. 23):

Բնականաբար Պողոս Առաքյալը եւ ավետարանիչները ավելին գիտեին Հիսուսի երկրավոր կյանքի մասին՝ քան այն ինչ գրեցին: Հովհաննես Ավետարանիչը հստակ կերպով արտահայտվում է. «**Իր աշակերտների առաջ Հիսուս բազում այլ նշաններ էլ արեց, որոնք այս գրքում գրված չեն: Այլ այսքանը գրվեց, որ դուք հավատաք, թե Հիսուս Քրիստոսն է՝ Աստծու Որդին. նաեւ՝ որպեսզի հավատաք ու նրա անունով հավիտենական կյանքն ընդունեք**» (Յովհ. Ի. 30-31), «**Բայց ուրիշ շատ բաներ էլ կան, որ Հիսուս արեց, որոնք, եթե մեկը մեկ առ մեկ գրած լինէր, կարծում եմ, թե աշխարհն իսկ բավական չէր լինի պարփակելու այդ գրքերը, եթե դրանք գրված լինեին**» (Յովհ. ԻԱ. 25):

Պողոս Առաքյալը գրում է, թե Հիսուս հարությունից հետո երեւաց ո՛չ միայն Կեփասին եւ հետո՝ տասներկուսին, «**Ապա երեւաց միանգամից ավելի քան հինգ հարյուր եղբայրների, որոնցից շատերը կան մինչեւ այժմ. ոմանք էլ ննջեցյալ եղան: Եւ ապա երեւաց Հակոբոսին,**» (Ա. Կորնթ. ԺԵ. 5-7): Առաջին ակնարկը բացարձակապես նշված չէ Ավետարաններում, իսկ Հակոբոսի ակնարկն էլ, եթե առանձին հասկացվի ապա՝ այն էլ չունեն:

Հոգեգալուստից հետո առաքյալները սկսեցին բերանացի քարոզել Հարուցյալ Տիրոջ մասին: Դժվար է ամբողջական պատկերացում կազմել, թե նրանք մանրամասն ինչ ասացին երկրավոր Հիսուսի առաջին երեսուն տարիների մասին կամ ինչպես ըմբռնեցին երկրավոր Հիսուսն ու Հարուցյալ Տերը ի դիմաց Հին Կտակարանի:

Ավետարաններից եւ Պողոսի թղթերից պարզ է, թե Հիսուսի քարոզչության հենց սկզբից առճակատումը անխուսափելի էր Նրա եւ հրեա կրոնական ղեկավարների միջեւ: Հիսուս Ինքը դատապարտեց օրենսգետներին (Մրկ. ԺԲ. 38-40): Մատթեոս Ավետարանիչը

համարյա մի ողջ գլուխ «**Վայ**»-երով դատապարտում է հրեա կրոնական առաջնորդներին, մինչեւ իսկ կոչելով նրանց «**օձեր եւ իժի ծնունդներ**» (Մտթ. ԻԳ. 1-36), իսկ Ղուկասը «**Չար մշակների եւ Կայսրին տրվելիք տուրքով**» բացահայտում է նույն իրավիճակը՝ այն վերջացնելով ուղղակի դատապարտումով (Ղուկ. Ի. 9-26, 45-47):

Հիսուս զգուշացնում է փարիսեցիների եւ հերովդեսականների թթխմորից. «**Նախ դուք ձեզ զգույշ պահեցեք փարիսիցիների խմորից, որ կեղծավորությունն է**» (Մրկ. Ը. 15, Ղուկ. ԺԲ. 1): Ըստ Մատթեոսի՝ **սադուկեցիների եւ փարիսեցիների** (Մտթ. ԺՁ. 6):

Երուսաղեմից իջած օրենսգետները հատուկ հետեւում են Հիսուսին՝ ոչ միայն նրա մասին տեղեկություն հավաքելու եւ Երուսաղեմ զեկուցելու, այլեւ նրան կործանելու միջոց գտնելու համար (Մրկ. Գ. 22, Է. 1, Մտթ. ԺԵ.1,, Ղուկ. Ե. 17, Ջ. 6,, ԺԳ. 10):

Անդամալույծի բժշկության ժամանակ հիշվում են փարիսեցիներն ու օրենսգետները (Ղուկ. Ե. 21, միայն **օրենսգետները**՝ տե՛ս Մրկ. Բ. 6, Մտթ. Թ. 3), որտեղ հակառակությունը ծագում է, երբ Հիսուս ներում է անդամալույծի մեղքերը, ինչը միայն Աստծուն է վերապահված: **Ծիսական հարցեր.-** Օրենսգետներն ու փարիսեցիները քննադատում են Հիսուսին՝ անմաքուր մաքսավորների հետ նստելու եւ ուտելու համար (Մրկ. Բ.16, Ղուկ Ե. 30, միայն «**փարիսեցիները**»՝ Մտթ. Թ. 11): Մի բան, որը պղծելու էր Օրենքը պահող Օրենսգետին: Հովհաննեսի աշակերտներն ու փարիսեցիները ծոմ են պահում, մինչ՝ Հիսուսի աշակերտները՝ ոչ (Մրկ. Բ. 18): Կրկին Հիսուսի աշակերտներից ոմանք անմաքուր ձեռքով են ուտում. խոսքն այստեղ ծիսական մաքրության մասին է (Մրկ. Է. 1):

Շաբաթ օրը պղծելու կապակցությամբ.- Նախ առաքյալներն են բեկանում Օրենքը (Մրկ. Բ. 24) եւ ապա ինքը՝ Հիսուս (Մրկ. Գ. 6): Այս դեպքին որպես հետեւանք՝ փարիսեցիները եւ հերովդեսականները (միայն «**փարիսեցիները**»՝ Մտթ. ԺԲ. 14) մտածում են, թե ինչպես վերացնեն Հիսուսին: Ամուսնալուծության խնդրով փարիսեցիներն են հարց բարձրացնում (Մրկ. Ժ. 2, Մտթ. ԺԹ. 3): Հիսուս Ծաղկազարդին մուտք է գործում Երուսաղեմ եւ իրեն հետեւող ողջ ամբոխն աղաղակում է մեսիայական սպասումներով (Ղուկ. ԺԹ. 38-39), իսկ Մատթեոսի Ավետարանում՝ տաճարում նայեւ մանուկներն են աղաղակում. «Օրհնություն Դավթի Որդուն» (Մտթ. ԻԱ.16), որտեղ էլ հրեա ղեկավարները բողոքում են, որովհետեւ համաձայն չէին այդ վերագրումներին: Քահանայապետերը, օրենսգետները եւ ծերերը տաճարում Հիսուսի հեղինակությունն են հարցաքննում (Մրկ. ԺԱ. 27; Մտթ. ԺԱ. 23, Ղուկ. Ի. 2 «**օրենսգետներ**» չունի): Այս նույն խումբը ցանկանում է Հիսուսին ձերբակալել, սակայն վախենում է ժողովրդից (Մրկ.ԺԲ. 12):

Ըստ Մարկոսի, երբ Հիսուս շաբաթ օրով մի մարդու չորացած ձեռքը բժշկեց, «**Փարիսեցիները հերովդեսականների հետ իսկույն դուրս ելան եւ խորհուրդ էին անում նրա դեմ, թե ինչպես նրան կորստյան մատնեն**» (Մրկ. Գ 6, տե՛ս ԺԱ 18, ԺԴ. 1):

Ըստ Ղուկասի՝ Նազարեթում Հիսուսի առաջին իսկ քարոզչության ժամանակ ժողովարանի ունկնդիրները նրան փորձում են գահավեժ անել (Ղուկ. Դ. 29): Հովհաննեսի Ավետարանում, Հիսուսի առաքելության գրեթե սկզբից, երբ Հիսուս շաբաթը չէր պահում, այլեւ Աստծուն իր հայրն էր կոչում, հրեաներն արդեն իսկ կամենում էին սպանել նրան (Յովհ. Դ. 18): Հիսուս ակնարկում է նրանց մտադրության մասին, ասելով՝ «**Ինչո՞ւ եք ուզում ինձ**

սպանել» (Յովհ. Է. 20): Թեեւ հրեաները մերժում են, որ նրանք այդպիսի բան ի մտի ունեն, սակայն «**Ուզում էին նրան բռնել. բայց ոչ ոք նրա վրա ձեռք չդրեց**» (Յովհ. Է. 30) հատվածը ցույց է տալիս, թե Հիսուսի խոսքը ճշմարիտ էր: (նույնը տե՛ս Է. 44):

Երբ Հիսուս ասում է. «**Ես եւ իմ Հայրը մի ենք**», հրեաները քարեր վերցրին, որ նրան քարկոծեն (Յովհ. Ժ. 31): Դարձյալ ուզում էին նրան բռնել, բայց նա նրանց ձեռքից դուրս պրծավ (Յովհ. Ժ. 39): Փարիսեցիներն ու քահանայապետերը ժողովի ընթացքում ասում են. «**Եթե նրան այսպես թողնենք, ամենքը կհավատան նրան, եւ հռոմեացիները կգան ու կվերացնեն մեր ազգն ու մեր սրբավայրը**» (Յովհ. ԺԱ. 47-48): Կայիափան, որն այդ տարվա քահանայապետն էր, ասում է. «**Մեզ համար ավելի լավ է, որ մեկ մարդ մեռնի ժողովրդի համար, քան թե ամբողջ ազգը կորչի**» (Յովհ. ԺԱ. 50):

Հրեա ղեկավարները՝ լինեն նրանք Քահանայապետեր, Փարիսեցիներ, Սադուկեցիներ կամ Հերովդեականներ, ամեն մի խումբ առանձին-առանձին հարց ուներ Հիսուսի հետ եւ բոլորը միացել էին՝ կործանելու Հիսուսին: Բոլորն էլ չէին ընդունում Հիսուսի՝ Իրեն վերապահած կոչումը, թե ինքը մարգարեների գուշակած Մեսիան է, ուր մնաց, թե նրան ընդունեն որպես Աստծու Որդի կամ հենց Աստված: Քահանայապետերը վախենում էին կորցնել ոչ միայն իրենց կրոնական հեղինակությունը, այլեւ այն մենաշնորհները, որոնք ձեռք էին բերել հռոմեացիներից (տե՛ս Յովհ. ԺԱ. 48): Սադուկեցիները նույնպես կապված էին տաճարի հետ. նրանք չէին հավատում հոգու անմահությանը (տե՛ս Մրկ. ԺԲ. 18-27, Մտթ. ԻԲ. 23-33 եւ Ղուկ. Ի. 27-40): Գործք Առաքելոց գրքում, երբ Պողոս Առաքեալն իմանում է, թե ատյանում Փարիսեցիներ եւ Սադուկեցիներ կան, դիմում է Փարիսեցիներին՝ ասելով, թե ինքը Փարիսեցի է եւ դատվում է մեռելների հարությանը հավատալու պատճառով: Այս հարցով երկու խմբերը իրար են բախվում (Գործք ԻԳ. 6): Տաճարի կործանումից հետո (70 թ.), ինչպես տաճարի քահանաները, սրանք նույնպես վերանում են ասպարեզից: Փարիսեցիներն ավելի մոտիկ լինելով Հիսուսի վարդապետությանը՝ թվում էր, թե ավելի սիրահոժար պետք է հետեւեին նրան, սակայն բացի մի քանիսից, նրանք էլ մեծավ մասամբ Հիսուսի դեմ դիրք ընդունեցին:

Թեեւ կան մի շարք արտահայտություններ, թե ժողովրդի միջից ոմանք Հիսուսի մասին ասում էին «**լավն է**», այդուհանդերձ «**հրեա առաջնորդներին վախի պատճառով ոչ ոք նրա մասին համարձակ չէր խոսում**» (Յովհ. Է. 12-13) կամ «**շատերը հավատացին նրան**» (Հովհ. Է. 31, Ը. 30), կամ նույնիսկ «**հրեա իշխանավորներից շատերը հավատացին նրան, բայց փարիսիցեների պատճառով չէին հայտնում, որպեսզի ժողովարանից դուրս չհանվեն. քանի որ մարդկանցից տրված փառքը ավելի սիրեցին, քան Աստծուց տրված փառքը**» (Յովհ. ԺԲ. 42): Սրանց հավատքը մակերեսային էր, ոչ նման առաքյալների հավատքին, որոնք Հոգեգալստյան դեպքից հետո պատրաստ էին հավատքի համար զոհելու նույնիսկ իրենց կյանքը: Տաճարի սպասավորները, որոնք ուղարկվել էին քահանայապետերի ու փարիսեցիների կողմից Հիսուսին բռնելու, ձեռնունայն վերադառնում են, ասելով՝ «**Ոչ մի մարդ երբեք այնպես չի խոսել, ինչպես այն մարդը**», **իսկ հրեա իշխանավորներն ասում են. «Միթե իշխանավորներից կամ փարիսեցիներից**

որեւէ մեկը հավատաց նրան, բացի այն խաժամուժ ամբոխից, որ օրենք չգիտի,»: Այսպեղից պարզ է, որ Հիսուսին չհետեւեցին մեծ թվով հրեա ղեկավարներ՝ այլ մի քանիսը:

Հիսուս Փարիսեցիների տանը ճաշի է նստում (Ղուկ. 7:36; 11:37; 14:1): Փարիսեցիները զգուշացնում են Հիսուսին, թե Հերովդեսը կամենում է սպանել Իրեն (Ղուկ.13:31): Նրանցից ոմանք արդարացնում են Հիսուսին, օրինակ՝ հարության վերաբերյալ Հիսուսի պատասխանից հետո «**Օրենսգետներից ոմանք նրան պատասխանեցին եւ ասացին. «Վարդապե՛տ, լա՛վ ասացիր**» (Ղուկ. Ի. 39), եւ կամ Օրենսգետներից մեկը, առաջին պատվիրանի մասին զրույցում համամիտ է լինում Հիսուսին եւ Հիսուս նրան ասում է. «**Հեռու չես Աստծու արքայությունից**» (Մրկ. ԺԲ. 34):

Նիկոդեմոսը, որը գիշերով եկել էր Հիսուսի մոտ, փարիսեցի էր եւ, հավանաբար, Սանհեդրինի անդամ (Հովհ. Գ. 2): Նա նույնիսկ փորձում է պաշտպանել նրան՝ «**Միթե մեր օրենքը դատապարտո՞ւմ է մարդուն, եթե նախ նրանից լսած եւ կամ իմացած չլինի, թե ինչ է գործել նա**» (Յովհ. է. 51): Հովսեփն ու Նիկոդեմոսը միասին են վերցնում Հիսուսի մարմինը, որպեսզի թաղեն (Յովհ. ԺԹ. 38-40):

Արիմաթիացի Հովսեփը (Հիսուսի թաքուն աշակերտը՝ հրեաների վախի պատճառով, Յովհ. ԺԹ. 38), ով հրեաների ժողովի անդամ էր եւ Աստուծո արքայության էր սպասում, Պիղատոսից խնդրեց խաչից իջեցնել Հիսուսի մարմինը՝ հրեական օրենքի համաձայն պատշաճ թաղում կատարելու համար (Մրկ. ԺԵ. 43): Սրանց շարքում կարելի է ավելացնել նաեւ Հայրոսին, ում Մարկոս (Գլ. Ե. 22) եւ Ղուկաս (Գլ. Ը. 41) Ավետարանիչները ժողովրդապետ են կոչում, իսկ Մատթեոսը (Գլ. Թ. 18) նրան անվանում է իշխանավոր: Գործք Առաքելոցում հիշված Փարիսեցի Գամաղիելն էլ համակիր «**Օրենուսույց**»-ներից էր (Գործք Ե. 34):

Այդուհանդերձ, Հիսուս հաճախ խարազանեց Փարիսիցիների կեղծավորությունն այն ատրճան, որ Քրիստոնեական մշակույթում այն համազոր է կեղծավոր ածականին: Օրինակ՝ «**Փարիսեցին ու մաքսավորը**» առակը (Ղուկ. ԺԸ. 9-14):

Հիսուս երբեք դեմ չի արտահայտվել Հին Կտակարանի «**Օրէնքին**». «**Ավելի հեշտ է, որ երկինք ու երկիր անցնեն, քան թե օրենքից մեկ նշանախեց ընկնի**» (Ղուկ. ԺԶ. 17):

Հիսուս քաջատեղյակ էր Հին Կտակարանին: Նա հաճախ ուսուցանում էր ժողովարաններում (Մրկ. 1:21, 39; 3:1; 6:2) եւ տաճարում (Մրկ. 11:17, 27; 12:1, 35, 38, 43; 14:49): Ղուկասն ասում է, որ Հիսուս «**Ըստ իր սովորության՝ շաբաթ օրը ժողովարան մտավ**» (Ղուկ. 4:16), կամ թե՝ Գալիլիայի Կապառնայում քաղաքում՝ «**շաբաթ օրերը ուսուցանում էր նրանց**» (Ղուկ. 4:31), ինչպես նաեւ տաճարում՝ (Ղուկ. 20:1): Հովհաննեսը ներկայացնում է Հիսուսին տաճարում ուսուցանելիս (Հովհ. 7:14; 8:20; 10:22): Վերջինիս մոտ, դատավարության ժամանակ Հիսուս ասում է. «**Ես միշտ ուսուցանել եմ ժողովարանում եւ տաճարի մեջ, ուր հավաքվում էին բոլոր հրեաները**» (Հովհ. 18:20): Հիսուսի քարոզչությունն ու գործունեությունը զարմացնում է ներկաներին՝ «**Այս ինչ նոր վարդապետություն է**» (Մրկ. 1:27; Ղուկ. 4:36) եւ կամ՝ «**Այսպիսի բան երբեք չենք տեսել**» (Մրկ. 2:12), կամ էլ՝ «**Ի՞նչ է այս իմաստությունը, որ տրված է սրան, որ սրա ձեռքերով այսպիսի զորավոր գործեր կատարվեն**» (Մրկ. 6:2), կամ՝ «**Սա ինչպե՞ս**

գիտի գրվածքները, քանի որ բնավ չի սովորել» կամ **«ոչ մի մարդ երբեք այնպես չի խոսել, ինչպես այն մարդը»** (Հովհ. 7:15, 46): Հիսուս **«Ուսուցանում էր ինչպես մեկը, որ հեղինակություն ունի եւ ոչ թե՝ ինչպես օրենսգետները»** (Մտթ. 7:28; Մրկ. 1:22):

Իսկ ուսուցանելու եւ բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ էր, որ Հիսուս լավ իմանար գրություններն ու հիմնվեր նրանց վրա:

Ըստ Ղուկասի, երբ Հիսուսին է տրվում Եսայի մարգարեի գիրքը (Ղուկ. 4:17-19, 21), նա բացելով կարդում է այն հատվածը ուր գրված է՝ **«Տիրոջ Հոգին իմ վրայ է, դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին ավետարանելու, սրտով բեկյալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու եւ կույրերին՝ տեսողություն, կեղեքվածներին ազատ արձակելու, Տիրոջը ընդունելի տարին հռչակելու»** (Եսայի 61:1,2; 58:6): Ապա մեկնելով այն՝ ասում. **«Այսօր այս գրվածքները կատարվեցին, երբ լսում էիք ձեր ականջներով»** (Ղուկ. 4:21): Իսկ ավելի ուշ Հիսուս ակնարկում է Եղիայի մասին, ով սովի ժամանակ օգնեց Սարեփթա քաղաքի այրի կնոջը (Գ Թագ. 17:1-16) եւ Եղիսե մարգարեին, ով բուժեց Նեեման Ասորուն (Դ Թագ. 5:1-19):

Կամ ըստ Մատթեոսի, երբ Հիսուս տեսավ օրենսգետների կեղծավ-որությունը, ասաց. **«Եսային լավ մարգարեացավ ձեր կեղծավորներիդ մասին ասելով՝ «Այս ժողովուրդը ինձ շրթներով է մեծարում, բայց նրանց սրտերը ինձնից հեռու են. ի զուր են ինձ պաշտում. ուսուցանում են վարդապետություններ, որ մարդկանց պատվիրածներն են»** (Մտթ. 7:6-7), (Եսայի 29:13):

«Աչքեր ունեք եւ չեք տեսնում, ականջներ ունեք եւ չեք լսում եւ դեռ չեք հասկանում» (Մրկ. 8:17-18; հմմտ.՝ Եսայի 18; 6:9-10; Երեմ. 5:21; Եզեկ. 12:2). սա կարող է թելադրել, որ նման խոսքեր մաս են կազմել մարգարեական գրականության կամ էլ ասույթի են վերածվել:

Նույնպես Մարկոս Ավետարանիչը (Գլ. 11:17) հղում է կատարում Եսայի մարգարեից (Գլ. 56:7), երբ ասում է՝ **«Գրված է՝ իմ տունը բոլոր ազգերի համար աղոթքի տուն է կոչվելու»**, եւ ապա շարունակելով մեջբերում է Երեմիա մարգարեի խոսքը՝ **«Իսկ դուք այն դարձրել էք ավազակների որջեր»** (Երեմ. 7:11):

Հովհաննեսի մոտ (Գլ. 6:45) կարդում ենք. **«Մարգարեների գրքերում գրված է, «եւ ամենքը Աստծուց ուսած կլինեն»** (Եսայի 54:13; հմմտ.՝ Հովել 2:27, 29) կամ էլ՝ **«ինչպես գիրքն է ասում. «Նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»** (Հովհ. 7:38, հմմտ.՝ Եսայի 44:3; 55:1; 58:11):

Այն հարցին, թե մի անձ ինչպես կարող է ժառանգել հավիտենական կյանքը, Հիսուս պատասխանում է. (Մրկ. 10:17, 19) **«Պատվիրանները գիտե՞ս. մի՛ շնանար, մի՛ սպանիր, մի՛ գողանար, սուտ մի՛ վկայիր, պատվի՛ր քո հորն ու մորը»** (Ելք 20: 12-16; Բ Օրենք 5:16-20): Մեկ ուրիշ տեղում Մարկոսը վերջին կետում հավելում է կատարում (Մրկ. 7:10)՝ ասելով. **«,եւ ով որ չարախոսի իր հոր կամ մոր մասին, մահվամբ թող պատժվի»** (տե՛ս Ելք 21:17; Ղեւտ. 20:9):

Իսկ թե ո՞րն է առաջին պատվիրանը, Հիսուս պատասխանում է. **«Լսի՛ր, Իսրայե՛լ, մեր Տեր Աստվածը միակ Տերն է. եւ դու պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով, եւ քո ամբողջ զորությամբ»** (Մրկ. 12:29-30, տե՛ս

Բ Օրենք 6:4-5), իսկ որպես երկրորդ պատվիրան՝ «**պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես**» (Մրկ.12:31, տե՛ս Ղեւտ. 19:18): Երբ Փարիսեցիներն ապահարզանի մասին հարց են տալիս, Հիսուսի պատասխանը հարցով է լինում՝ «**Մովսեսը ձեզ ի՞նչ պատվիրեց**» (Մրկ. 10:2): Հիսուս հասկացնում է, որ ինքը գիտի եւ Փարիսեցիներին էլ պարտադրում ասել այն, որ նրանք էլ գիտեն: Փարիսեցիները հիմնվում են «**Երկրորդ Օրենք**» գրքի վրա (Բ Օրենք 24:1-5), մինչ Հիսուս հղում է կատարում «**Ծննդոց**» գրքի (Ծնունդ. 1:27; 2:22-24; 5:2) Ադամի ու Եւայի ստեղծումից, որն ավելի վաղ ու հիմնական է: Անբարոյական կնոջը պատժելու մասին օրենքը հստակ էր, ինչը գիտեին եւ՛ հրեա օրենսգետները եւ՛ Հիսուս (տե՛ս Հովհ. 8:3 հմմտ.՝ Ղեւտ. 20:10 եւ Բ Օրենք 22:23): «**Եւ ձեր օրենքում իսկ գրված է, թե երկու մարդու վկայությունը ճշմարիտ է**» (Հովհ. 8:17, տե՛ս Բ Օրենք 19:16):

Բորոտի բժշկության պարագային Հիսուս ասում է. «**Գնա՛, դու քեզ ցո՛ւյց տուր քահանային եւ ընծա տուր քո մաքրվելու համար, ինչպես որ հրամայել էր Մովսեսը՝ ի վկայություն նրանց**» (Մրկ. 1:43-4; Մտթ. 8:4; Ղուկ. 5:14, տե՛ս Ղեւտ. 13-14 գլուխներ): Հիսուս ոչ միայն ծանոթ է այս օրենքին, այլեւ թելադրում է բորոտին՝ ներկայանալ քահանային, որպեսզի նրանից մաքրության վկայագիր առնելով կարողանար հասարակության մեջ մտներ:

Հիսուս Իր հարությունից հետո երեւաց Էմմավուսի ճամփորդներին. նրանց հետ քայլելիս, Հիսուս «**Սկսած Մովսեսից ու բոլոր մարգարեներից՝ մեկնում էր նրանց այն բոլորը, ինչ գրված է իր մասին բոլոր Գրքերում**» (Ղուկ. 24:27): Եթե մի պահ ենթադրենք, որ սա ավելի Ղուկասի կամ նրա համայնքի հավատքի արդյունք է՝ գրված շուրջ 75-80թթ., սակայն, ինչպես տեսանք, նույն միտքն արտահայտված է նաեւ Պողոսի կողմից, ավելի վաղ, շուրջ 50թ.:

Հիսուս եւ հրեա Օրենսգետները հիմնվում էին Օրենքի եւ Մարգարեների վրա. նրանցից մեկը կամ մյուսը սխալ պետք է լիներ: Ինչպես վերը նշվեց, Հիսուս քաջածանոթ էր Հին Կտակարանին: Նա հաճախ անդրադառնում էր հրեաների՝ Օրենքի անտեղյակությանը կամ խեղաթյուրմանը, այսպես օրինակ՝ «**Օրենքը ձեզ Մովսեսը չտվե՞ց, բայց ձեզնից ոչ ոք Օրենքը չի պահում**» (Հովհ. 7:19): Սադուկեցիներին, որոնք հարությանը չէին հավատում, Հիսուս ասում է. «**Ենց դրա համար չէ՞, որ մոլորված էք, քանի որ չգիտեք գրքերը եւ ոչ էլ՝ Աստծու զորությունը**» (Մրկ. 12:24): Փարիսեցիների քննադատությանը, թե Հիսուսի աշակերտները անմաքուր ձեռքով են ուտում, Հիսուս պատասխանում է. «Աստծու պատվիրանը թողած՝ մարդկանց ավանդությունն եք պահում» (Մրկ. 7:8; Մտթ. 15:6; Կողոս. 2:20-23): Շաբաթ օրը խախտելով դիվահար կնոջը բուժելու համար, երբ Հիսուս քննադատվեց, ասաց. «**Կեղծավորնե՛ր, ձեզնից յուրաքանչյուր ոք շաբաթ օրով իր եզը կամ էշը մսուրից չի՞ արձակում եւ չի՞ տանում ջուր տալու**» (Ղուկ. 13:15; 14:5): Ամուսնալուծության հարցով Հիսուս նշում է, թե Մովսես ապահարզանի կանոնը հասարակեց հրեաների տկարության պատճառով, «**մինչդեռ արարչագործության սկզբից Աստված արու եւ էգ ստեղծեց նրանց**» (Մրկ. 10: 6), կամ՝ «**Մովսեսը չէ, որ հաց տվեց, այլ Հայրը**» (Հովհ. 6:32):

Հիսուս զարգացնելով իր միտքը, թե հրեաները ոչ միայն անտեղյակ են Սուրբ Գրքին, այլեւ խեղաթյուրելով հարմարեցնում այն իրենց կարիքներին: Սակայն նույնիսկ նրանց

փրկության հույսը, որ հիմնված է Սուրբ Գրքի վրա, իզուր է՝ «**Քննեցե՛ք գրքերը, քանի որ կարծումեք, թե նրանով հավիտենական կյանք կունենաք**» (Հովհ. 5:39): «**Մի՛ կարծեք, որ ես Հոր մոտ ձեզ պիտի ամբաստանեմ. կա մեկը, որ ամբաստանող կկանգնի ձեր դեմ՝ Մովսեսը, որի վրա դուք հույս եք դրել**» (Հովհ. 5:39): Աղքատ Ղազարոսի առակի մեջ Հիսուս եզրակացնելով ասում է. «**Եթե Մովսեսին եւ մարգարեներին չեն լսում, մեռելներից մէկն էլ եթե հարություն առնի, չպիտի համոզվեն**» (Ղուկ. 16:31):

Հիսուս ասում է. «**Մի՛ կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին ջնջելու եկա. չեկա՛ ջնջելու, այլ՝ լրացնելու**» (Մտթ. 5:17), կամ «**Ամբողջ Օրենքը եւ մարգարեները մարգարեացան մինչեւ Հովհաննեսը**» (Մրկ. 11:13; Մտթ. 11:13) եւ «**Օրենքն ու մարգարեները մինչեւ Հովհաննեսն էին. այնուհետեւ ավետարանվում է Աստծու արքայությունը**» (Ղուկ. 16:16): Հիսուս իրեն չի վերապահում մի պարզ մարգարեի կամ սուրբ մարդու դիրք, այլ՝ շատ ավելի բարձր կոչում: Եթե Հովնան մարգարեն կարողացավ երեք օր կետի փորի մեջ ողջ մնալ, ապա՝ «**այստեղ Հովնանից մեծը կա**» (Մտթ. 12:41): Եթէ Սողոմոնն իր իմաստությամբ գրավեց հեռու եւ մոտիկ մարդկանց ուշադրությունը, ապա՝ «**այստեղ Սողոմոնից մեծը կա**» (Մտթ. 12:42; Ղուկ. 11:32-33), եւ եթե Տաճարը, որ հրեաների սրբություն սրբոցն էր, ապա՝ «**այստեղ Տաճարից մեծը կա**» (Մտթ. 12:6): Երբ Հիսուս անդամալույծի մեղքերը ներեց, հրեաները ճիշտ հասկացան Հիսուսին. միայն Աստված կարող է ներել մարդկանց մեղքերը եւ դա, ըստ նրանց, հայհոյություն էր (Մրկ. 2:5-7; Մտթ. 9:2-3; Ղուկ. 5:20-21):

Հիսուս, երբ վախճանաբանական իր դերի մասին է խոսում, իրեն է վերապահում «**Մարդու Որդի**» տիտղոսը (միայն Մրկ. 2:10, 28; 8:31,38; 9:9,12,31; 10:33,45; 13:26; 14:21,41,62), ինչը պետք է ընկալվի Դանիել 7:13-ի, Եսայի 53-ի եւ Սաղմոս 117-ի վախճանաբանական կերպարի եւ չարչարվող ծառայի լույսի տակ: Սակայն ուրշները նրան ընկալում էին որպես մարգարեներից մեկը՝ «**Մարգարեն**», «**Եղիան**», «**Հովհաննես Մկրտիչը**» (Մրկ. 6:14-5; 8:28), «**Աստծու Որդի**» (Մրկ.1:1; 3:11; 5:7; 15:39; 14:61; Ղուկ. 22:70), իսկ աշակերտները նրան ընկալում էին որպես «**Քրիստոս**» (Մրկ. 1:1; 8:29; Մտթ.16:16; Ղուկ.9:20): Այն կոչումները, որոնք Հիսուս իրեն է վերապահում, նույնպես բացահայտում են իր ով լինելը, որը հատկապես հանդիպում ենք Հովհաննես Ավետարանչի մոտ, «**Ես եմ**»-ների շարքում՝ «**Ես եմ կենաց հացը**» (6:35), «**Ես եմ աշխարհի լույսը**» (8:12), «**Ես եմ ոչխարների դուռը**» (10:7), «**Ես եմ լավ հովիվը**» (10:11), «**Ես իսկ եմ հարություն եւ կյանք**» (11:25), «**Ես եմ ճանապարհը եւ ճշմարտությունը եւ կյանքը**» (14:6), «**Ես եմ ճշմարիտ որթատունկը**» (15:1), եւ պարզապես փոթորկի ժամանակ երբ Հիսուս ասում է. «**Ես եմ, մի՛ վախեցեք**» (6:20), կամ Սամարացի կնոջ արտահայտության դեպքում, թե երբ Մեսիան՝ Քրիստոս գա, նա ամեն ինչ կպատմի, Հիսուս նրան ասում է. «**Այդ Ես եմ**» (4:25-26), եւ ձերբակալման ժամանակ, երբ Հիսուս ընդառաջ է գնում ամբոխին եւ ասում. «**Ես եմ**» (18:5-6): Հովհաննես Ավետարանիչը սիրում է իր խոսքերի մեջ բազմիմաստություն դնել: Այստեղ նա այլ իմաստներից վեր տեսնում է Հիսուսի Աստվածային բնությունը, Իր անունը՝ «**Ես որ եմ**» ճիշտ այնպես, ինչպես արտահայտված է Հին Կտակարանում «**Ես այն Աստվածն եմ, որ է**», (Ելք 3:14):

Այս ամենից հետո անհավանական էր, որ Հիսուս մնար զուտ հրեական մակարդակի

վրա: Այդ պարագային ամենաշատը կարող էր լիներ հրեական կրոնի բարեկարգիչ կամ էլ՝ մի աղանդի կամ շարժման հիմնադիր, ինչպես Էսեենները, Զելոտները կամ Քումրանի շարժումը: Նման շարժումներ, որոնք պատմության մեջ հագիվ փողատակի նշում են եղել: Օրինակ՝ «**Առաքյալների գործեր**»-ում (5:36-37) Գամաղիելի հիշած Թեուդասը կամ Հուդա Գալիլիացին: Հետևաբար, Հիսուսի՝ Օրենքին լրացումը կամ ամբողջացումը պետք է լիներ համաձայն նրա անվան ու դիրքի՝ համամարդկային, եւ բոլոր ժամանակների համար:

Հիսուսի ուսմունքը հիմնված է բացարձակ սիրո վրա, ինչպես գրում է Հովհաննեսը. «**Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրեք միմյանց, ինչպես ես ձեզ սիրեցի**» (Հովհ. 13:34, հմմտ.՝ «**Սերն է օրենքի լրումը**» Հռոմ. 13:10), նաեւ «**Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար**» (Հովհ.15:13; Հռոմ. 5:8): Մի «**Սեր**», որ պատրաստ էր ներելու ոչ թե յոթ անգամ այլ՝ յոթանասուն անգամ յոթ (Մտթ. 18:21), մի «**Սեր**», որ պատրաստ էր ներելու ավազակին վերջին իսկ վայրկյանին, երբ նա դարձի եկավ խաչի վրա (Ղուկ. 23:40-43), մի «**Սեր**», որ պատրաստ է ներելու նույնիսկ իրեն չարչարողներին ու սպանողներին՝ «**Հայր, ներիր դրանց, որովհետեւ չգիտեն, թե ինչ են անում**» (Ղուկ. 23:34):

Իսկ պարզապես որպես Օրենքի ամբողջացում Հիսուս ասում է. «**Լսե՞լ եք, թե ինչ ասվեց նախնիներին. «Մի՛ սպանիր**» (Ելք 20:13; Բ Օրենք 5:17, 16:18), **որովհետեւ ով որ սպանի ենթակա կլինի դատաստանի, իսկ ես ձեզ ասում եմ, թե՝ ամեն մարդ, որ զուր տեղը բարկանում է եղբոր վրա, ենթակա կլինի դատաստանի,** (Մտթ. 5:22): «**Լսե՞լ եք, թե ինչ ասվեց «Մի՛ շնանար**» (Ելք 20:14; Բ Օրենք 5:18), **իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ կնոջ նայում է նրան ցանկանալու համար, արդեն շնացավ նրա հետ իր սրտում**» (Մտթ. 5:28): «**Արդարեւ ասվել է. «Ով որ արձակի իր կնոջը, թող նրան արձակման թուղթը տա**»(Բ Օրենք 24:1-4)**: Իսկ ես ձեզ ասում եմ. ամեն մարդ, որ իր կնոջն արձակում է առանց պոռնկության պատճառի, նա է, որ նրան շնության է մղում. եւ ով որ արձակվածին է առնում, շնանում է**» (Մտթ. 5:32):

«**,Երդմնազանց մի՛ լինիր, այլ արա՛ Տիրոջն այն, ինչ երդվել ես** (Ղեւտ. 9:12; Թվեր 30:2; Բ Օրենք 23:2): **Իսկ ես ձեզ ասում եմ՝ ամենեւի՛ն չերդվել**» (Մտթ. 5:34):

«**,Աչքի փոխարեն՝ աչք եւ ատամի փոխարեն՝ ատամ** (Ելք 21:23-24; Ղեւտ. 24:19-20; Բ Օրենք 19:21): **Իսկ ես ձեզ ասում եմ՝ չարին հակառակ չկանգնե՛լ. այլ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տա, նրան մյո՛ւսն էլ դարձրու**» (Մտթ. 5:39):

«**Լսե՞լ եք, Պիտի սիրես ընկերոջդ եւ պիտի ատես քո թշնամուն: Իսկ ես ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարությո՛ւն արեք ձեզ ատողներին եւ աղոթեցե՛ք նրանց համար, որ չարչարում են ձեզ եւ հալածում,** (հմմտ.՝ Հռոմ. 12:9-21): Այս ամբողջը բարձրացնում է մարդուն Աստվածային կատարելության՝ «**Արդ կատարյա՛լ եղեք դուք, ինչպես որ ձեր երկնավոր Հայրն է կատարյալ**» (Մտթ. 5:43-48):

Հիսուս խոսքով եւ գործով լրացնում է Օրենքը՝ շաբաթ օրը, երբ բուժում է մի մարդու չորացած ձեռքը՝ «**Շաբաթ օրով ի՞նչ բան է օրինավոր անել. բարի գո՞րծ գործել, թե՞ չարիք անել. մի հոգի՞ ազատել, թե՞ կորստյան մատնել**» (Մրկ. 3:4; Ղուկ. 6:9): Իսկ ըստ Մատթեոսի՝ «**Ո՞վ է ձեզնից այն մարդը, որ մի ոչխար ունենա, եւ դա շաբաթ օրն**

ընկնի փոսի մեջ, մի՞թե չի բռնի ու վեր հանի այն: Իսկ արդ, մարդը ոչխարից որքան եւս առավել է. ապա ուրեմն, պեպք է շաբաթ օրը բարիք գործել» (Մտթ. 12:11-12):

Ըստ Հովհաննեսի, օրենսգետներն ու փարիսեցիները շնության մեջ բռնված մի կին են բերում Հիսուսի մոտ եւ ասում. «**Օրենքում Մովսեսը մեզ պատվիրել է այսպիսիններին քարկոծել. արդ, դու դրա մասին ի՞նչ ես ասում**» (Հովհ. 8:3-5), (Ղեւտ. 20:10; Բ Օրենք 22:23-24): Օրենքը շատ հստակ էր: Եթե Հիսուս հետեւեր օրենքին, ապա նոր խոսք չուներ ասելիք, իսկ եթե դեմ կանգներ, ապա դատապարտվելու էր: Հիսուս, առանց օրենքին դեմ բան ասելու, այլ հաստատում է այն՝ հիմնվելով ավելի բարձր բարոյական մակարդակի՝ գութի եւ սիրո վրա՝ «**Ձեր միջից անմեղը նախ թող քար գցի դրա վրա**» (Հովհ. 8:7). եւ երբ բոլորը թողնում գնում են, առանց նրան դատապարտելու, Հիսուս կնոջն ասում է. «**Ես էլ քեզ չեմ դատապարտում. գնա՛, այսուհետեւ մի՛ մեղանչիր**» (Հովհ. 8:11): Հիսուս առանց կաշկանդվելու է վերաբերվում օրենքին՝ «**Այն ամենը, ինչ կկամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես եւ դո՛ւք արեք նրանց, որովհետեւ ա՛յդ իսկ են Օրենքն ու մարգարեները**» (Մտթ. 7:12):

Հիսուսից առաջ եւ հետո եկան մարդիկ, որ իրենք իրենց ներկայացրին որպես մարգարեներ կամ Աստուծո խոսնակներ. ոմանք աղանդներ հիմնեցին, ուրիշներ այլ կրոններ, շատերն իրենց հետեւորդներով հանդերձ անհայտ կորան պատմության մեջ: Հիմնական տարբերությունը Հիսուսի եւ նրանց միջեւ այն է, որ Հիսուս ոչ միայն ինքն իրեն «**Աստծու Որդի**» կոչեց (Հովհ. 10:36), այլ նաեւ՝ «**Աստված**»՝ «**Ես եւ Հայրը մի ենք**» (Հովհ. 10:30; 17:22), կամ՝ «**Հայրը իմ մեջ է, եւ ես՝ Հոր մեջ**» (Հովհ. 10:38; 14:10,20; 17:21): Հովհաննես Ավետարանիչը նաեւ գեղեցկորեն ամփոփում է՝ «**Սկզբից էր Խոսքը եւ Խոսքը Աստծու մոտ էր, եւ Խոսքը Աստված էր, եւ Խոսքը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ**» (Հովհ. 1:1,14; տե՛ս Կողոս. 1:15-20):

Այս կարճ գրությամբ մեր նպատակն էր ցույց տալ կապը Հիսուսի եւ Հին Կտակարանի, եւ թե այն ինչքանով է անհրաժեշտ՝ հասկանալու Հիսուսի քարոզած համամարդկային եւ հավիտենական ուսմունքը: Իհարկե, սա մի փոքրիկ քայլ է այդ ուղղությամբ. ոչ բոլոր խոսքերին ենք անդրադարձել, այլ այնքանով, որ մարդիկ ընթերցեն եւ այդ ուղղությամբ մտածեն: Աշխատանքն ավելորդ չծանրաբեռնելու միտումով խուսափել ենք հղումներ անել հեղինակների կամ գիտական աշխատանքների մասին, ինչպես նաեւ փորձել ենք քիչ միջամտել՝ թողնելով, որ Ավետարանն ինքը վկայի եւ խոսի իր Հերոսի, մեր Տիրոջ՝ մարմնացյալ Հիսուս Քրիստոսի մասին:

«Զի Յիսուս Քրիստոս երէկ եւ այսօր՝ նոյն եւ յաւիտեան»

(Եբր. ԺԳ. 8)

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՋԱՐՅԱՆ